ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

# N ՀՀ ԳՄ -ՄԱԱՊՁԲ-25/24 -1

ք. Մարտունի
09 ապրիլի 2025թ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մանուկյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Արմինե Մուրադյան Ա/Ձ -ն, ի դեմս տնօրեն Ա. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 2739500 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունինն հազար հինգ հարյուր ) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 2-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում19.1:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-

ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

AnyScanner

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրություններ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ | «Արմինե Մուրադյան» ԱՁ |
| Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 | Գեղարքունիք, Մարտունի Մոմճյան փ.1 փկղ. 4 |
| Բանկ՝ ՀՀ ֆին. Նախ. գործառնական վարչ | ՀՎՀՀ 72921834 |
| Հ/Հ 900171002919 | «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| ՀՎՀՀ 08428824 | 220199601547000 |
| ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար | Ա. Մուրադյան |
| Ս. Մանուկյան | |
| (ստորագրություն) | (ստորագրություն |
| | Կ.Տ. |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավորի գինը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման հասցեն | Մատակարարման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 39221170/1 | Հացամաններ մեծ | Հացաման պոլիպրոպիլենե , բաց շրջանաձև ,հիմքի երկարությունը 48սմ +/ - 5 սմ, խորությունը՝ 13-15սմ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է մատակարարը: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 2700 | 16200 | 6 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունու համայնքի Վաղաշենի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 6 | 39221170/2 | Հացամաններ փոքր | Պլաստմասե հումքով, սննդային նախատեսված սեղանին հաց դնելու համար,18-25սմ երկարությամբ, խորությունը՝ 7-9 սմ, տարբեր գույների:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 600 | 21600 | 36 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունու համայնքի Վաղաշենի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 7 | 39221230/1 | Փլավքամիչ | Փլավքամիչներ սննդային չժանգոտվող պողպատից, երկկողմանի բռնակ, տրամագիծը՝ 36սմ, իրանը սննդային չժանգոտվող պողպատից:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 5000 | 15000 | 3 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունու համայնքի Վաղաշենի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 8 | 39221380/1 | Գդալ թեյի | ՀՀ Կառավարության 2006 թ/ նոյեմբերի 16-ի N 1750-Ն որոշման հաստատված "Խեցեղործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի", ԳՕՍՏ 17151-81, ԳՕՍՏ 28973-91 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Սպասքը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութերից, սննդի համար | հատ | 200 | 28800 | 144 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունու համայնքի | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ընդհանուր երկարությունը 130-150մմ: Մեսաղի հաստությունը ոչ պակաս 1,3 մմ, աշխատող մասի տարողությունը 5+/-1 սմ խորանարդ:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | | | | | մսուր մանկապարտեզ | հետո |
| 9 | 392213 80/2 | Գդալ ճաշի | ՀՀ Կառավարության 2006 թ/ նոյեմբերի 16-ի N 1750-Ն որոշմամբ հաստատված "Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի", ԳՕՍՏ 17151-81, ԳՕՍՏ 28973-91 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Սպասքը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութերից, սննդի համար նախատեսված չժանգոտվող պողպատից: Ճաշի գդալ չ/պ, երկարությունը մինչև 200 մմ, հաստությունը 2 մմ, աշխատող մասի խորությունը 0.5 մմ, եզրերը հարթեցված, փայլեցված: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 200 | 28800 | 144 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 10 | 392213 90/1 | Պատառաքաղ (չժանգոտվող մետաղից) | ՀՀ Կառավարության 2006 թ/ նոյեմբերի 16-ի N 1750-Ն որոշմամբ հաստատված "Խեցեգործական ամանեղենի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգի", ԳՕՍՏ 17151-81, ԳՕՍՏ 28973-91 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափորոշիչներին համապատասխան: Սպասքը պետք է պատրաստված լինի հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր նյութերից, սննդի համար նախատեսված ալյումինից և չժանգոտվող պողպատից: Պատառաքաղ սեղանի: Պատառաքաղը փայլեցված, ընդհանուր երկարությունը մինչև 160- 200 մմ, աշխատողմասը 4 հատ, մեսաղի հաստությունը ոչ պակաս 1,8մմ: :Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 200 | 28800 | 144 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 11 | 392213 70/1 | Շերեփ ճաշի | Շերեփ 250-500մլ սննդային չժանգոտվող պողպատից: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 1600 | 4800 | 3 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 12 | 392212 80/1 | Թասեր | Ներծից հումքով միջին թասեր 11սմ խորությամբ և 30սմ տրամագծով, սննդային: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 4000 | 32000 | 8 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 13 | 392211 70/3 | Սննդի տարաներ | Տարաներ կրուպեղենի համար, պլաստմասե թափանցիկ, կափարիչով, 20լ տարողությամբ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 4000 | 60000 | 15 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 15 | 392213 80/3 | Խավարտի գդալ | Խավարտի գդալ՝ 150-200մլ, սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափանիշներին համապատասխան;: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 1500 | 4500 | 3 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Աստղաձորի | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | 392212 30/2 | Քափիր | Քափիր չժանգոտվող մետաղ, տրամագիծը՝ 10-12սմ, սննդային չժանգոտվող մետաղից : Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 300 | 600 | 2 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Ասողաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 20 | 331913 18/1 | Ջափիչ բաժակ բաժանչափով | Ջափիչ բաժակ 1լ, պլաստիկ կամ սննդային չժանգոտվող պողպատից, ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020-ի չափանիշներին համապատասխան: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին: Գույները և չափերը համաձայնեցնել պատվիրատուի հետ : | հատ | 400 | 400 | 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Ասողաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 26 | 192126 00/1 | Անկողնային հավաքածու | Անկողնային հավաքածուն իր մեջ ներառում է բարձի լցերես՝ արտաքին, վերմակակալ և սավան: ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Բարձի լցերես՝ արտաքին - 40 x 60 սմ, 100% սաթին է, չքրչնեցնող, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից պատրաստված: 30°C ջերմաստիճանում լվացվող: Վերմակակալ - 150 x 120 սմ, 100% սաթին է, մի կողմից փակվում է ցեփով, չքրչնեցնող, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից պատրաստված: 30°C ջերմաստիճանում լվացվող: Սավան - 160x120 սմ, 100% սաթին, չքրչնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից: Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:չափերը +/- 10%: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին | հատ | 5450 | 1569600 | 288 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Ասողաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 27 | 192126 00/2 | Բարակ ծածկոց ամառային (բամբակյա կամ բայկայե) | ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Բամբակե ծածկոցը ծառայում է որպես ամառային վերմակ, չափսերը՝ 160 x 120 x 2 սմ ( L x Ե x Բ): Հիմքը վաշինգտոնյան բարակ շերտ է, կտորը բամբակ է, խտությունը՝ խտությունը՝ 980գ/մ2 : Ճաս խիտ կարերի շնորհիվ շաս դիմացկուն է: Չքրչնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից: 30-50°C ջերմաստիճանում լվացվող: Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ:+/- 10%: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին | հատ | 4950 | 712800 | 144 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Ասողաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 29 | 351113 90/1 | Անձնակազմի համար գոգնոցներ | ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Բամբակյա, չթից, հումքը մաքուր բամբակե մանրաթելերի խիտ ջրակայուն գործվածքից, խտությունը՝ 580գ/մ2 , ձևը՝ երկար, կարերը ուղիղ և հավասար: Պարանոցից կապվող, դիմացում ունի երկու գրպան: Չափսերը՝ (60-65) x (65-85) (L x Ե)<br>Սպիտակ կամ կամ տարբեր գույների, ծաղկավոր:<br>Լվանալ 30°C ջերմաստիճանում:<br>Գույնը, ձևը և չափսերը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին | հատ | 2800 | 22400 | 8 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի համայնքի Ասողաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |
| 31 | 183111 90/1 | Անձնակազմի համար խալաթներ | ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Բամբակյա, չթից, հումքը մաքուր բամբակե մանրաթելերի խիտ գործվածքից, երկար, կարերը ուղիղ և հավասար, օձիքով խալաթ, | հատ | 4350 | 34800 | 8 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունի | Պայմանագրի կնքման օրվանից |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | միջին և բարձր տարիքի կանանց համար: Սպիտակ կամ կամ տարբեր գույների, ծաղկավոր, խտությունը՝ 780գ/մ2: Լվանալ 30°C ջերմաստիճանում:: Չափսեր՝ /46-54/, Ջրոտնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից: Լվանալ 30°C ջերմաստիճանում: Գույնը և չափսերը նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին | | | | | Աստղաձորի մսուր մանկապարտեզ | ...յին օր հետո |
| 32 | 395145 00/1 | Երեսսրբիչ մանկական | ՀՀ ԿԳ նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի N 858-Ն հրամանի պահանջներին համապատասխան: 30x50 սմ, 100% բամբակյա, գույնը նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված:Տեղափոխումը և բեռնաթափումը մատակարարի հաշվին | հատ | 550 | 158400 | 288 | ՀՀ Գեղարքունիքի մարզ Մարտունու համայնքի Աստղաձորի մսուր մանկապարտեզ | Պայմանագրի կնքման օրվանից հաշված 5 օրացուցային օր հետո |

**ԳՆՈՐԴ** ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
Բանկ՝ ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչ
Հ/Հ 900171002919
ՀՎՀՀ 08428824
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ս. Մանուկյան
(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**
«Արմինե Մուրադյան» ԱՁ
Գեղարքունիք, Մարտունի Սոմեյան փ.1 փկղ. 4
ՀՎՀՀ 72921834
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
220199601547000
Ա. Մուրադյան-----------
(ստորագրություն

Հավելված N 2
« 09 » ապրիլ 2025 թ. կնքված
ՀՀ ԳՄ -ՄԱԱՊՁԲ-25/24-1 ծածկագրով

պայմանագ…

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| իրավերով նախատեսված չափաբաժնի համարը | անվանումը | Այրանքի «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձորի Մսուր մանկապարտեզի կարիքների համար… անկողնային ծածկոցների ձեռքբերում դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-… ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 5,6,7,8,9,10,11,12,13,15,17, 20,26,27,29,31,32 | «ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձորի Մսուր մանկապարտեզի կարիքների համար ապրանքների ձեռքբերում | 0 | 0 | | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 | 2739500 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ
Հասցեն` ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
Բանկ` ՀՀ ֆին. Նախ. գործառնական վարչ
Հ/Հ 900171002919
ՀՎՀՀ 08428824
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Ս. Մանուկյան
(ստորագրություն)

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արմինե Մուրադյան» ԱՁ
Գեղարքունիք, Մարտունի Մոմճյան փ.1 փկղ. 4
ՀՎՀՀ 72921834
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
220199601547000

Ա. Մուրադյան--------------
(ստորագրություն